ԱՆԳԼԻԱՅԻ ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ VI-XI ԴԴ.

ԵՍԱՅԱՆ Է. Ս.

Հնագույն Անգլիայի ավատատիրական պետության և իրավունքի սկզբնավորման հետ միաժամանակ կազմավորվում է հասարակական համակարգը, որն իրավականորեն և օրենսդրորեն ձևակերպվում ու հաստատագրվում է Քենտի թագավոր Էտելբերտի օրենքներում, որտեղ հիշատակվում են ավատատիրական պետության իրավունքի սուբ-յեկտները, նրանց իրավունքները և պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև իրավունքի ոչ սուբյեկտները: Առանց հասարակական համակարգի խորը և բազմակողմանի ուսումնասիրության ու գիտական-իրավական բացատրության անհնար է ամբողջական պատկերացում ունենալ անգլոսաքսոնական Անգլիայի հասարակական համակարգի, այդ համակարգի տարակարգերի և դրանց համայնապատկերի, ինչպես նաև տվյալ պատմական դարաշրջանի պետական և իրավական համակարգի, հատկապես օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների և նրանց իրավասությունների, կենտրոնական կառավարման և տեղական ինքնակառավարման, նրանց փոխգործակցության բնույթի մասին: Առավել ևս, Անգլիայի ավատատիրական պետության հասարակական համակարգի առանձնահատկությունների բացահայտումն իրավական լայն հնարավորություններ է ընձեռում անաչառ ու անկողմնակալ բնութագրելու այդ պետության, կառավարման և պետական կառուցվածքի ձևերը, պետական կամ քաղաքական ռեժիմը Արևմտյան Եվրոպայի ավատատիրական պետությունների համակարգում՝ նշյալ պետաիրավական պատմական ժամանակաշրջանում[1]:

Հանրահայտ է, որ եվրոպական պատմաբանների և իրավագետ պատմաբանների գիտական ուսումնասիրությունների առարկան ոչ թե հասարակական ու տնտեսական, այլ պետական-քաղաքական համակարգերն են, և գիտական-քննական շեշտը դրվում է հասարակության քաղաքական կազմակերպության և իրավական համակարգերի վրա: Իսկ եթե նրանք երբեմն էլ անդրադարձել են հնագույն Անգլիայի ավատատիրական պետության հասարակական համակարգի կամ դրա առանձին կողմերի լուսաբանմանը, ապա նրանց գիտատեսական մեկնաբանությունները և հետևությունները կրում են մակերեսային ու կցկտուր, հպանցիկ և

[1] **Stubbs W.,** *Select Charters and other Illustrations of English Constitutional History from the Earliest Times to the Reign of Edward the First, Oxford, 1870, p. 60-70;* **Attenborough F. L.,** *The Laws of the Earliest English Kings, Cambridge, 1922;* **Richardson H. G.** *and* **Sayles G. O.,** *Law and Legislation from Ethelberth to Magna Carta, Edinburgh, 1966, p. 1-8*; *Хрестоматия памятников феодального государства и права стран Европы, М., 1961, с. 62-64; Хрестоматия по истории средних веков, т. 1, М., 1961, с. 590-593.*

թռուցիկ բնույթ[2]: Անգլիայի հասարակական համակարգի վերաբերյալ պատմական և պատմաիրավական գրականությունում գոյություն ունեն մի շարք տեսակետներ, ինչպես, օրինակ, XVIII դ. հանրաճանաչ պատմաբան Դ. Հյումը «Անգլիայի պատմությունը» աշխատության առաջին հատորի առաջին հավելվածի՝ «Ազնվականությունը» վերտառության ներքո ուղղակի հիշատակում է թագավորին, եպիսկոպոսին կամ էլդերմենին[3], որոնք, ըստ էության, բարձրագույն տարակարգին պատկանող իրավունքի սուբյեկտներն էին: Գերմանական սաքսերը, ինչպես մայր ցամաքի մյուս ազգերը,- գրում է նա,- մարդկանց բաժանում էին երեք տարակարգերի՝ ազնվականների, ազատների և ստրուկների: Նրանք այդ տարբերականության որակն իրենց հետ բերում են Բրիտանիա: Ազնվականներն անվանվում էին տէներ, իսկ մյուս երկու զանազանակերպերն էին՝ թագավորի տէները և աննշան տէները[4]: Իսկ ազատ մարդկանց կամ ազատների տարակարգում հիշատակում է կէռլերին, իսկ կէռլերը տարակարգվում էին երեք տարբերականությունների կամ երեք խմբի, որոնց անվանում էին կէռլեր կամ հողագործներ, կէռլեր կամ վաճառականներ, ծաղրածուներ կամ կէռլեր, այլ կերպ ասած, ըստ Դ. Հյումի, գոյություն են ունեցել հողագործ կէռլեր, վաճառական կէռլեր և ծաղրածու կէռլեր: Բացի ազնվականներից ու ազատ մարդկանցից, Անգլիայի հասարակության համակարգին էին պատկանում կախյալ կամ ճորտ գյուղացիները՝ սերվերը և սոկմենները: Անդրադառնալով Անգլիայի հասարակության համակարգի այդ տարակարգերի բնույթին՝ նա ընդգծում է հասարակության անազատ մարդկանց, որոնց շարքին պատկանում էին ստրուկները, այդ թվում՝ տնային ստրուկները, ստրկությունում ծնվածները և ուիլները[5]:

Հետևելով Դ. Հյումի պատմագիտական ժառանգությանը՝ Անգլիայի սահմանադրության պատմության հայտնի հետազոտող Է. Ֆրիմենն «Անգլիայի սահմանադրության զարգացումը հնագույն ժամանակներից» մենագրությունում ուղղակի խոստովանում է. «Մենք՝ հինգերորդ և վեցերորդ հարյուրամյակների անգլերի, սաքսերի ու ջութերի, և իններորդ դարում եկած դանիացիների ու նորմանների հետնորդներ ենք»[6]: Եվ իսկապես, պատմական ակնհայտ ճշմարտություն է, որ նվաճման հանգամանքներն ինքնին թելադրում էին ոչ միայն ստրուկների ձեռքբերումը, այլև նպաստում ու օժանդակում ստրուկների բազմացմանն ու նրանց խմբերի անընդհատ բազմապատկմանը Բրիտանիայի նվաճման դարաշրջանում (XI դ. երկրորդ կես): Է. Ֆրիմենը միաժամանակ հիշատակում է. «Այդ նույն անգլերը, սաքսերը և ջութերն իրենց հետ Բրիտանիա են բերում այն տարակարգերի տարբերականությունը, որին նրանք սովոր են եղել իրենց հնագույն հայրենիքում»[7], հատկապես հնագույն Գերմանիայի տնտոնական հասարակարգում: Եվ պատմաիրավական հարուստ ու հավաս-

---

[2] **Hume D.,** *The History of England. New Edition, vol. 1, Philadelphia, 1776;* **Freeman Ed. A.,** *The Growth of the English Constitution from the Earliest Times, Leipzig, 1872;* **Richardson H. G.** *and* **Sayles G. O.,** նշվ. աշխ., **Smith G. A.,** *History of England. Third Edition, New York, 1966.*

[3] **Hume D.,** նշվ. աշխ., էջ *159:*

[4] Նույն տեղում, *էջ 160:*

[5] Նույն տեղում, *էջ 161-163:*

[6] **Freeman Ed. A.,** նշվ. աշխ., էջ 43:

[7] Նույն տեղում, էջ 44-45:

տի փաստերի ուսումնասիրության, և գիտական-քննական վերլուծության հիման վրա նա վավերագրում և վերահաստատում է Դ. Հյումի՝ «մարդկանց երեք տարակարգերի» վերոնշյալ տեսակետը. «Առաջին հայացքից մենք տարբերում ենք մարդկանց երեք դասեր՝ յուրաքանչյուրին հանդիպելով տնտոնական հասարակարգում. ազնվական կամ ավագանի, սովորական ազատ քաղաքացի և ստրուկ»[8]: Սակայն ի տարբերություն Դ. Հյումի և Է. Ֆրիմենի տեսակետների՝ հայտնի անգլիագետ, պատմաբան-իրավագետ Գ. Սմիթը «Անգլիայի պատմությունը» ստվարածավալ աշխատությունում՝ «Անգլոսաքսոնական հասարակությունը» վերնագրի ներքո նշում է, որ հնագույն Անգլիայում մարդկանց տարակարգման և տարբերակման հետևանքով եղել են հասարակության դասեր՝ ազնվականներ, ազատ մարդիկ, կիսաազատ մարդիկ, սերվեր և ստրուկներ, ինչպես նաև անազատ սերվեր: Ազնվականները կոչվում էին էռլեր, իսկ ոչ ազնվական ազատ մարդիկ՝ կէռլեր[9]:

Բացի անգլերից, սաքսերից, ջութերից ու ֆրիզներից, հնագույն գերմանական ցեղերից հայտնի են նաև տնտոնները, որոնց գլխավորել են նրանց ցեղային առաջնորդները: Եվ քանի դեռ տնտոնական ցեղային առաջնորդը թագավոր չէր և ռազմադաշտում չէր, կրում էր էլդորմեն, իսկ պատերազմի ընթացքում՝ հերեթոգա տիտղոսները: Հերեթոգա երկրորդ տիտղոսը հստակ համապատասխանում էր լատինական դուքս ռազմապետի կոչմանը, որը հետագայում դուրս է մղվում և անհետանում է անգլերենից, ու պահպանվում է գերմանական կամ տնտոնական հերցոգ լեզվական ձևը, որն անգլերեն թարգմանվում է դուքս: Պատմականորեն այդ դուքսերը եղել են էլդորմեններ կամ հերեթոգներ: Էլդորմեն կամ հերեթոգա տիտղոսները միահյուսվում են թագավոր տիտղոսի հետ, որոնք հիշատակվում են Անգլիայի ավատատիրության իրավունքի աղբյուրներում[10]: Իսկ լատինական թագավոր՝ *Rex* տիտղոսը համասեռությամբ նշանակում էր անգլերենում տեղ գտած թագավոր՝ *King, Cyn* կամ թե *Kin* տիտղոսին, կամ թե *Cyning* տերմինն իր կրճատված ձևով համահնչյուն էր *Cyne* բառին, որը դարձյալ անգլիական բառ-տերմին է և նշանակում է թագավոր, այսինքն՝ ազնվատոհմ, ազնվազարմ ցեղի ներկայացուցիչ,որոնք համապատասխանաբար հավասարազոր էին լատինական *Genus* տերմինին, որը նույնպես նշանակում է ցեղ կամ տոհմ: Եվ հատկապես բարբարոսությունից քաղաքակրթության անցման երկարատև ժամանակաշրջանում տոհմացեղային ավագանիները, ցեղապետերը կամ թե տոհմացեղային առաջնորդները, ռազմապետերը սխրանքների ու քաջագործությունների շնորհիվ ձեռք էին բերում թագավորական արժանապատվություն, վեհապետական հեղինակություն և արդեն հանդես էին գալիս ոչ թե որպես ցեղի կամ տվյալ երկրամասի առաջնորդ, այլ՝ ամբողջ ժողովրդին գլխավորող մեծություն և գերակայություն:

---

[8] Նույն տեղում, էջ 30:

[9] **Smith G. A.,** նշվ. աշխ., էջ 18-20:

[10] **Stubbs W.,** նշվ. աշխ., *Памятники истории Англии XI-XIII вв., М., 1936; Хрестоматия памятников феодального государства и права стран Европы; Хрестоматия по истории средних веков, т. 1.*

Բրիտանիայի առաջին նվաճողներ Հենգեստը և Հորսը հիմնադրում են Քենտը: Իսկ Քենտի բնակչությունը նրանց անվանել է ոչ թե թագավորներ, այլ՝ հերեթոգներ, առաջնորդներ կամ հերցոգներ: Իսկ բրիտների դեմ մի քանի հաղթանակներ տանելուց հետո Հենգեստն ընդունում է գլխաշոր կամ գլխակապ, այն է՝ թագավորական արժանապատվություն, իսկ նրա որդի Էսկը կոչվում է թագավոր: Այդ նույն օրինաչափությամբ, Ուէսսեքսի առաջին նվաճողներ Սերդիկը և Սինրիկը անվանվում են էլդորմեններ, ընդունում են գլխաշոր կամ գլխակապ՝ թագավորական արժանապատվություն: Այդ ժամանակվանից սկսած՝ արևմտյան սաքսերի ցեղային առաջնորդները կոչվում էին թագավորներ: Անգլոսաքսոնական ցեղային առաջնորդները կամ ռազմապետերը Բրիտանիա գաղթելուց և բնակվելուց հետո միշտ չէ, որ կրում էին թագավորի արժանիքները և արժանապատվությունը: Սակայն, երբ նրանք գտնվում էին Բրիտանիա-յում, արդեն ստանում էին հերեթոգի կամ էլդորմենի ստորադաս կոչումը: Եվ եթե վերջիններս հաղթում էին ճակատամարտում, ապա ռազմական արիության և սխրագործության շնորհիվ նվաճված երկրամասում դառ-նում էին հզոր ու հաղթանակած բնակչության արժանապատվության խորհրդանիշ և համարվում էին թագավորին արժանի տիտղոսակիրներ: Ցեղային առաջնորդներից շատ քչերին էր հաջողվում կրել գլխաշոր կամ գլխակապ և թագավորական արժանապատվություն, քանի որ ժողովուրդն էր գնահատում նրանց արիության, սխրանքների ու քաջու-թյան միջոցով ձեռք բերված թագավորական արժանիքների ու արժանա-պատվության չափանիշները: Իսկ թագավորական իշխանությունն, ըստ էության, գերազանցում էր ցեղային առաջնորդների՝ հերեթոգների, հեր-ցոգների կամ էլդորմենների կառավարման ձևը: Ըստ որում, թագավորա-կան իշխանության կառավարման ձևին անցնելու համար թագավորներից անհրաժեշտաբար պահանջվում էր կառավարման կենսափորձ, և այդ կենսափորձը ձեռք էր բերվում նվաճողների առաջին սերնդի գոյատևման և արարման երկարատև ժամանակաշրջանում:

Անգլոսաքսոնական հասարակության այդ բնորոշ գծերը նկատվում էին նաև սկանդինավյան ժողովուրդների հասարակարգում: Արդեն նշեցինք, որ IX դարում դանիացիները և նորմանները արշավում են դեպի Հյուսիսային և Արևելյան Անգլիա և մշտական բնակություն հաստատում: Իսկ այդ դարաշրջանում նրանց հասարակարգում գոյություն են ունեցել առաջնորդների երկու դաս՝ թագավորների և յառլերի: Յառլերն իրենց կարգավիճակով համապատասխանում և հավասարազոր էին անգլիական էլդորմեններին: Դա նշանակում էր, որ հին սաքսերին, սաքսոններին մայր ցամաքում կառավարել են ոչ թե թագավորները, այլ կուսակալները, այսինքն՝ դուքսերը կամ էլդորմենները, իսկ վերջիններս գլխավորել են կուսակալությունները, որոնց բնորոշ է եղել բիրտ ու բռնակալական կառավարման ձևը: Եվ հատկապես այդպիսի բռնակալական կառավարման ձևի գոյության պայմաններում էլ Բրիտանիա կղզու արևելյան սաքսերը տապալել են թագավորական իշխանությունը և կառավարման բռնակալական ձևը: Սակայն իրականում պետահրավական ի՞նչ տարբերություններ են գոյություն ունեցել թագավորի և դուքսի կամ թագավորի ու էլդորմենի միջև: Պատմական այդ դարաշրջանում թագավորն արդեն

եղել ու մնում էր որպես ազգային միասնության ներկայացուցիչ, ազգային պետականության խորհրդանիշ, ազգային ինքնության արտահայտիչ, իսկ էլդորմեններն անձնավորում և մարմնավորում էին յուրաքանչյուր ցեղի կամ երկրամասի անկախությունը, դեռ ավելին՝ էլդորմենի կառավարումն առավել իրական էր, քան թագավորի իշխանությունը: Սակայն էլդորմենն իր իշխանությամբ ավելի հեռու էր կանգնած բնակչությունից, ժողովրդական հոծ զանգվածներից, բազմությունից, քան թագավորը, թագավորի իշխանությունը: Եթե թագավորի տիտղոսը կարող էր կրել միայն, այսպես կոչված, առասպելական Վոդենը, ապա էլդորմենի պաշտոնում կարող էր լինել յուրաքանչյուր մարդ, սակայն վերջինս պարտավոր էր ապացուցել և հիմնավորել, որ ինքն օժտված է այնպիսի յուրահատուկ գծերով և արժանիքներով՝ ինչպիսիք էին անձնական խիզախությունը, միջցեղային պատերազմներում տարած հաղթանակը, արժանապատվության՝ ձեռք բերած որակները, որոնք անկրկնելի ու անհրաժեշտ էին ցեղապետի, ռազմապետի բարձրագույն կոչման համար: Իսկ թագավորի համընդհանուր ճանաչողության պայմաններում թագավորի ռեժիմն արդեն պարտադիր օրենք էր համարվում թագավորության բոլոր հպատակների, Բրիտանիայի բոլոր ցեղերի համար, որոնց համախմբման ու միավորման շնորհիվ ձևավորվում և կազմավորվում էին անգլիացի ազգը, Անգլիայի ժողովուրդը: Իհարկե, թագավորի քաղաքական-իրավական ռեժիմի անշեղ իրականացման, գործադրման ու կենսագործման ազդեցության ներքո և օրենքի իշխանության շնորհիվ ցեղերը և ցեղախմբերը հաստատակամորեն ու աստիճանաբար միավորվում էին թագավորի և թագավորության իշխանության շուրջը: Եվ առանձնապես դրա համար էլ «փոքրիկ թագավորիկները կամ անկախ էլդորմենները քայլ առ քայլ գլխապետությունը զիջում էին առավել հզոր թագավորներին: Իսկ երկրորդ փուլում ավելի փոքր պետությունը կատարելապես միանում էր մեծի հետ»[11]: Իսկ եթե փոքրիկ թագավորը շարունակում էր կառավարել, ապա կառավարում էր ոչ թե որպես անկախ կամ թեկուզ ավատառու միապետ, այլ հանդիսանում էր պաշտոնատար անձ և գործում էր իր միապետի՝ թագավորի պատվիրագրած իրավազորությամբ և իշխանությամբ, որից էլ ստացել էր իր պաշտոնը: Է. Ֆրիմենը հիշատակում է պետահիրավական և պատմական մի իրադարձություն, որի համաձայն, փոքր թագավորությունները և անկախ էլդորմենները միավորվում են մեկ միասնական թագավորության ներքո: Նա գրում է. «Սերդիկը և Սինրիկը բնակություն են հաստատում Բրիտանիայի հարավային ափին ու փոքր թագավորությունների և անկախ էլդորմենների աստիճանական միավորման շնորհիվ գերիշխանություն են ձեռք բերում Բրիտանիայի բոլոր կղզիներում և անմիջականորեն թագավորական տիրապետություն են հաստատում Անգլիայի ամբողջ բնակչության նկատմամբ»[12]: Երբեմն էլդորմենը կարգվում էր արևմտյան սաքսերի և անգլիացիների թագավոր: Իսկ երբ էլդորմենը փոխակերպվում էր թագավորի, դա նշանակում էր, որ էլդորմենը հեթանոսությունից կերպարանափոխվում էր քրիստոնեական

[11] **Freeman Ed. A.,** նշվ. աշխ., էջ 60-61:
[12] Նույն տեղում, էջ 61:

թագավորի, իսկ այդպիսի թագավորը եղել է ժողովրդի արժանապատվությունը, ներկայացուցիչը և հետնորդը: Հենց այդպիսի պատմական իրականությունում էր, որ թագավորի անձնական ազդեցությունն ավելի մեծ նշանակություն ուներ, քան թե նրա քաղաքական իշխանությունը: Եվ իր հպատակների ու բոլոր մարդկանց նկատմամբ օգտագործելով իր առանձնահատուկ հզորությունը և հարստությունը՝ թագավորը հետզհետե ընդունում էր իշխանատիրոջ կերպարանք, իսկ նրա հպատակների մի մասը թագավորին անձնապես ծառայելու համար արդեն գտնվում էր նրա իշխանության ներքո: Եվ թագավորին անձնապես ծառայելու և նրան ուղեկցելու իրականությունն արդեն իսկ կրում էր առաջնակարգ քաղաքական նշանակության բնույթ ու բովանդակություն: Իսկ մարդու և իշխանատիրոջ միջև եղած անձնական հարաբերությունների համակարգը, հասարակական այդ հասկացությունը լատիներեն կոչվում էր *Comitatus* (հայերեն՝ ուղեկցություն), իսկ իշխանատիրոջն ուղեկցողներն անվանվում էին հեծյալներ, գուգազներ (*Comites, comes*): Գուգազները պարտավոր էին ուղեկցելու իշխանատիրոջը և հավատարմորեն ծառայելու նրան: Իշխանատերն իր հերթին պարտավորվում էր մշտապես հովանավորել իրեն ուղեկցող հեծյալներին: Լատիներեն *Comites* կամ *comes* տերմինը համարժեք է անգլերենի *thegn*-տէն հասկացությանը: Իսկ *thegn*-ը հայերեն թարգմանվում է ծառա բառով: Հետևաբար, ցեղային առաջնորդների, թագավորների կամ իշխանատիրոջ հեծյալ ծառաների կամ հեծյալ ուղեկցողների պարտականություններից էին միջցեղային առաջնություններում կամ մրցություններում հաղթելը և առաջնորդի, թագավորի կամ իշխանատիրոջ ողորմածությանն արժանանալը, ճակատամարտերում արիություն, խիզախություն դրսևորելը և սխրանք գործելը: Տէնի ու ձիավորի համար խստագույնս ամոթալի էր ճակատամարտում զոհված առաջնորդից հետո կենդանի վերադառնալը. «Նրանց առաջին սուրբ պարտականությունն էր պահպանել, պաշտպանել նրան, նրան վերագրել իրենց խիզախության բոլոր գործերը: Առաջնորդները մարտնչում են հաղթանակի համար, տէները մարտնչում են հանուն իրենց առաջնորդների»[13]: Ահա այսպես է սկզբնավորում և ձևավորվում ռազմական կամ զինվորական անձնական ծառայության ռազմաքաղաքական ինստիտուտը: Բազմաթիվ հեծյալների ուղեկցության անձնական զինվորական ծառայության ռազմավարական սկզբունքը էական նշանակություն ունեցավ Մեծ Բրիտանիայի հնագույն ժամանակաշրջանի պատմության, հասարակական համակարգի ձևավորման, կազմավորման, ինչպես նաև անկողմնակալ գիտական ճիշտ բացատրության համար: Իսկ ի՞նչ տեղ ու դիրք էին գրավում հնագույն անգլիական ազնվականները՝ էռլերը, Անգլիայի հասարակական համակարգում՝ VI-XI դարերում:

Հնագույն Անգլիայի հասարակության համակարգում կարևոր տեղ էր զբաղեցնում անգլիական հնագույն ազնվականությունը՝ էռլերը և սովորական ազատ քաղաքացիները: Ըստ էության, նախակարգյալ հասարակության տոհմացեղային ազնվականության ներկայացուցիչները էռլերն էին: Անգլոսաքսոնական ցեղերի նվաճումներից հետո Բրիտանիայի նա-

[13] Նույն տեղում, էջ 67-68:

խակարգյալ հասարակության տոհմացեղային այդ ազնվականությունը հետզհետե տեղը զիջում էր բոլորովին այլ տոհմի՝ անգլոսաքսոնական հասարակության ազնվականությանը՝ բոլորովին նոր սկզբունքներով, պատմաքաղաքական նոր պայմաններում ու հանգամանքներում: Հնագույն Բրիտանիան նվաճելուց և մշտական բնակություն հաստատելուց հետո անգլոսաքսերը էռլերի արտոնությունները դիտում ու գնահատում էին որպես ոչ այլ ինչ, քան սովորական պատվարժանություն: Նրանք էռլերին համարում էին միջին դաս կամ պարզապես ազնվականություն: Ի ծնե այդ հնագույն ազնվականությանը՝ էռլերի դասին, փոխարինելու էր գալիս նոր ձևի ազնվականությունը՝ ազնվականություն ըստ ծառայության և անձնական հարաբերությունների բնույթի: Իսկ դա, ըստ էության, նշանակում էր, որ այդ նոր ազնվականությունը հավատարմորեն ծառայելու էր թագավորին, նրան ուղեկցելու էր ռազմադաշտ, սրբորեն կատարելու նրա օրենքները և հրամանները: Հատկապես այդ նոր ազնվականությունը ներկայացնում էին տէները, որոնք աստիճանաբար փոխարինում էին հնագույն ազնվականությանը՝ էռլերի դասին կամ տարակարգին: Եվ անկախ այն հանգամանքից, թե ինչպես էին վեհանում թագավորական իշխանությունը և թագավորի արժանապատվությունը, թագավորին անձնական ծառայության խանդավառությունն առավել մեծագույն պատիվ ու պատվաբերություն էր համարվում: Եվ առանձնապես թագավորին անձնական ծառայության հասարակական այդ ինստիտուտն արդեն դառնում էր նոր ազնվականության հայտանիշը, հատկանիշը և չափանիշը: Այդպիսի հասարակական հարաբերությունների պայմաններում ուժեղանում էր թագավորի քաղաքական-իրավական իշխանությունը ոչ միայն նրանով, որ նա բարձր էր կանգնած պետության արժանավոր մյուս մարդկանցից, այլ նաև նրանով, որ նա քաղաքական կառավարիչ էր, իշխանատեր, ուներ պարտավորություններ և իր ծառայողների նկատմամբ որպես անձնական վերաբերմունքի և համակրանքի դրսևորում, նրանց հատկացնում էր հողատարածքներ:

Անգլիայի հասարակության համակարգում նոր ազնվականության իրավունքի սուբյեկտներից ուրույն տեղ ուներ իշխանազորային հեծյալը կամ գուգազը, որը նշանակում էր նաև համախոհ, ընկեր: Իսկ իշխանազորային հեծյալն արդեն փոխարինում էր տէնին, այսինքն՝ ծառային: Անձնական ծառայությունը համարվում էր պատվավոր գործ, և ծառա (տէն) անվանումը ստորացուցիչ չէր, իսկ տէնը համապատասխանում էր հնագույն էռլ (*Earl)* անվանակոչմանը: Էռլ է անվանվել թագավոր Էտելրեդը[14], և միայն Էտելստան թագավորին են կոչել «ամբողջ Անգլիայի էլդորմեն[15]: Այս առնչությամբ Է. Ֆրիմենը նշում է. «Թագավորական տէները, մարդիկ, որոնք հողատարածք էին ստանում թագավորից և պարտավորվում էին անձամբ ծառայելու նրան, կազմում էին ազնվականության բարձրագույն դասը: Ստորին լորդերի, եպիսկոպոսների և էլդորմենների տէները կազմում էին երկրորդ դասը»[16]: Ազնվականության

[14] Նույն տեղում, էջ 69:
[15] **Hume D.,** նշվ. աշխ., էջ 157:
[16] **Freeman Ed. A.,** նշվ. աշխ., էջ 78-79:

բարձրագույն և ստորին դասերի տէների միջև իրավական տարբերությունն այն էր, որ բարձրագույն դասի մեջ ի ծնե մտնում էր ավագագույն ազնվականությունը, որը համարվում էր փակ դաս սովորական ազատ քաղաքացիների համար: Իսկ ազնվականության երկրորդ դասը, ըստ էության, բաց էր սովորական ազատ քաղաքացիների՝ կէռլերի համար: Ընդ որում, կէռլերը չէին կարող ազնվականության երկրորդ դասի կազմում ընդգրկվել միայն մեկ պատճառաբանությամբ, որ նրանք չէին կարող փոխել իրենց նախնիների կէռլ անվանակոչումը: Սակայն իրենց կենսագործունեության ընթացքում վերջիններիս երբեմն հաջողվում էր ազնվականության երկրորդ դասին պատկանող տէն դառնալ: Պատմական ու պետահիրավական այդ պայմաններում, սովորական ազատ քաղաքացիների իրավական դրությունը վատթարացնելու քաղաքականություն իրականացնելու հետևանքով, անհասանելի էր դառնում ազնվականության կոչմանն արժանանալու՝ նրանց հասարակական ձգտումը: Իսկ հին ազնվականությունը ազնվականության բարձրագույն դասի, մասնավորապես թագավորի հետ անձնական հարաբերությունների շփման ուժով և իր ծառայական առավելությամբ ավելի պատվավոր տեղ էր գրավում, քան իր դասային արտոնությունների շնորհիվ:

Անգլիայի ավատատիրական իրավունքի համաձայն՝ VI-XI դդ. կազմավորվում է Անգլիայի հասարակության համակարգը, որի կազմում էին անգլոսաքսոնական հնագույն ազնվականությունը՝ էռլերի դասը, ազատ համայնակիցների՝ կէռլերի դասը, կիսաազատները, այսինքն՝ կախյալ կամ ճորտ գյուղացիների դասը, ինչպես նաև անազատները՝ ստրուկների դասը, որի անդամներն իրենց իրավական կարգավիճակով իրավունքի սուբյեկտներ (անձեր) չէին համարվում:

Այսպիսով, հնագույն Անգլիայի կամ անգլոսաքսոնական Անգլիայի վաղ ավատատիրական պետության և իրավունքի կազմավորման ժամանակաշրջանում գոյանում են Անգլիայի իրավունքի սուբյեկտները, այդ սուբյեկտների առանձին դասերը, նրանց տարակարգման հատկանիշները, որոնք կազմում էին VI-XI դդ. Անգլիայի հասարակական համակարգը, որն իր իրավական հաստատագրումն է ստանում Անգլիայի թագավորների օրենքներում և դատաստանագրքերում:

ЗАКОНОДАТЕЛЬНОЕ ЗАКРЕПЛЕНИЕ СОЦИАЛЬНОЙ СИСТЕМЫ ФЕОДАЛЬНОГО ГОСУДАРСТВА АНГЛИИ VI-XI ВВ.

ЕСАЯН Э. С.

Резюме

В период формирования раннефеодального государства и права древней или англосаксонской Англии сформировались также субъекты английского права, отдельные классы и их классовые различия, составлявшие структуру социальной системы Англии VI-XI вв. и получившие свое правовое подтверждение в законах и судебниках английских королей.